

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**



**ՀՀ ԿԳՄՄՆ «Երևանի Լեոյի անվան հ. 65 ավագ դպրոց»  
ՊՈԱԿ**

## **ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

**Թեմա՝ Առանցքային կարողունակությունների ձևավորմանը նպաստող  
դասերի պլանավորումը 'Մաթեմատիկա' առարկայի ուսուցման  
գործընթացում**

**Կատարող՝ Նարինե Բոխյան**

**Ղեկավար՝ Գայանե Սիմոնյան**

**ԵՐԵՎԱՆ 2022**

## Բովանդակություն

1. Ներածություն-----	3
2. Գիտելիքների ամրությունը-----	5
3. Ինտերակտիվ ուսուցում-----	6
4. Առանցքային կարողունակությունների ձևավորմանը նպաստող դասի այլանավորում-----	7
5. Եզրակացություն-----	13
6. Գրականություն-----	14

# Ներածություն

Ըստ Հանրակրթություն պետական չափորոշի՝ կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են:

Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից:

Հանրակրթական տարրական, հիմնական և միջնակարգ ծրագրերի սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները նկարագրում են, թե հանրակրթական հիմնական ծրագրերի կրթական աստիճանների ավարտին սովորողը ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա: Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը:

Միջնակարգ կրթության կարողունակություններն են՝

- 1) լեզվական գրագիտություն և կարողունակություն
- 2) սովորել սովորելու կարողունակություն
- 3) ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
- 4) ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն
- 5) թվային և մեդիա կարողունակություն
- 6) մշակութային կարողունակություն
- 7) մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն
- 8) տնտեսական կարողունակություն:

Տվյալ հետազոտական աշխատանքում նկարագրված է իմ աշխատանքային փորձից մի դասի պլանավորում 'երկրարաչափություն' առարկայի ուսուցման գործընթացից, որը նպաստում է առանցքային կարողունակությունների ձևավորմանը: Հիմնական նպատակն է նպաստել սովորել սովորելու կարողունակության ձևավորմանը, նաև դասավանդման ընթացքը դարձնել ավելի ակտիվ, մասնակցային և խրախուսել վերլուծական, քննադատական միտքը աշակերտների շրջանում:

Սովորել սովորելու կարողունակություն. սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր

իրավիճակներում: Նրանք ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները:  
Սովորողները ինքնակազմակերպվում են և ձևավորում են ժամանակի արդյունավետ  
կառավարման հմտություն:

Նրանք կարողանում են գնահատել սեփական և մյուսների ֆիզիկական ու  
հոգեբանական հնարավորությունները, սովորում են աշխատել  
ծանրաբեռնվածության պայմաններում: Սովորելու ընթացքում աշակերտները  
ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի  
ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար  
մոտեցումներ կիրառելու ունակություններ: Սովորողները ձևավորում են  
համակարգային և ինտեգրված մտածողություն:

## Գիտելիքների ամրությունը

Այսօր երեխաների կյանքին բիզնես ինդուստրիաների ակտիվ միջամտության արդյունքում աշակերտներն այլևս պարզապես չեն: Նրանք զբաղված են ֆուտբոլային հանդիպումներ, սերիալներ դիտելով ու տարատեսակ խաղերով: Աշակերտներին բավականաչափ զբաղեցնում են նաև սոցիալական ցանցերը: Մի խոսքով՝ սովորելու ժամանակ շատ քիչ է մնում: Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի, կրթության համակարգը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը: Այսպիսով՝ սովորելը հնարավոր դարձնելու առաջին քայլը ուշադրության կենտրոնացումն է: Երբ աշակերտը կենտրոնացնում է ուշադրությունը, ուսուցանվող նյութը տեղափոխվում է աշխատանքային կամ կարճաժամկետ հիշողության մեջ: Մարդու կարճաժամկետ հիշողության հնարավորությունները սահմանափակ են, այսինքն՝ մարդը չի կարող միանգամից շատ բան սովորել:

Նոր գիտելիքներ ձեռք բերելու աշակերտի հնարավորությունը մեծապես կախված է այն բանից, թե գիտելիքների նախնական ինչ պաշար ունի աշակերտը: Մեր գիտելիքների պաշարը պահեստավորվում է երկարատև հիշողության մեջ: Այն աշակերտները, ովքեր ունեն գիտելիքների հարուստ պաշար, ավելի շատ բան կարող են վերցնել նոր ուսուցանվող նյութից: Սրանից կարելի է կարևոր եզրահանգում կատարել՝ որքան շատ գիտելիքներ ունեք, այնքան հեշտ ու շատ կարող եք նոր բաներ սովորել:

Գիտելիքների ամրության սկզբունքը պահանջում է, որ սովորողների մոտ երկար ժամանակ պահպանվի յուրացված գիտելիքների ունակությունների և հմտությունների համակարգը: Դա հնարավոր չէ ապահովել պարզագույն սերտման ճանապարհով:

Չետևաբար գիտելիքների ամրության անհրաժեշտ պայմաններից մեկը յուրացվածի գիտակցականությունն է, որն էլ իր հերթին ապահովում է սովորողների ակտիվ մտավոր գործունեությունը: Չետևաբար գիտելիքների ամրության անհրաժեշտ պայմաններից մեկը դրանց ակտիվ եղանակով ձեռքբերումն է:

Կտրտված, կցկտուր, չհամակարգված և միմյանց հետ կապ չունեցող գիտելիքները չեն կարող ամուր լինել: Սակայն համակարգայնությունն ապահովվում է ուսուցման գիտականությամբ: Այսպիսով՝ գիտելիքների ամրության հաջորդ անհրաժեշտ պայմանը ուսուցման գիտականությունն է: Սակայն դիտականությունն ու

համակարգայնությունը միասին դարձյալ բավարար չեն գիտելիքների ամրության համար, որովհետև հակառակ դեպքում կարիք չի լինի գիտելիքների ամրությունն առանձնացնելու որպես առանձին սկզբունք: Գիտելիքների ամրությունն ապահովելու համար անհրաժեշտ է կազմակերպել այնպիսի ուսուցում, որը հաշվի կառնի նաև հիշելու մեխանիզմի հետազոտման արդյունքները:

Մանկավարժության մեջ մենք մասնավորաբար օգտվում ենք հետևյալ դրույթներից.

ա) հիշելն ուղիղ համեմատական է կրկնությանը,

բ) հիշողությունն ունի ընտրովի բնույթ. մենք միշտ հիշում ենք այն, ինչը մեզ հետաքրքրում է, էական է և կարևոր,

գ) Նյութը լավ է հիշվում, երբ նրա մոտիվը գործնականում դրա կիրառելն է,

դ) հիշելը հեշտանում է, երբ հիշման ենթակա նյութը տրոհվում է ըստ իմաստի առանձին մասնաբաժինների՝ առանձին ենթավերնագրերով,

ե) զգացմունքներով համեմված նյութն ավելի լավ է հիշվում:

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և

ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները:

Ավանդական ուսուցումը ունի որոշ թերություններ.

1. Ավելի շատ կենտրոնացած է հիշողության վրա, քան մտածողության վրա

2. Զիչ է նպաստում ստեղծագործելու, անկաախության, ակտիվության զարգացմանը

3. Անբավարար կերպով է հաշվի առնված տեղեկատվության ընկալման

անհատական առանձնահատկությունները:

Նոր նյութի սովորելու փուլում ուսուցիչը բացատրում է նոր տեղեկություններ,

ընտրում է նպատակներին հասնելու ուղիներ: Աշակերտը ընդունում է:

## **Ինտերակտիվ ուսուցում**

Մեթոդ բառը տրամաբանական տեղեկատուներում սահմանվում է որպես

բնության, հասարակության, մտածողության երևույթների ու օրինաչափությունների ուսումնասիրությանն ուղղված կանոնների ու հնարքների համակարգ,

ճանաչողությունում և պրակտիկայում որոշակի արդյունքների հասնելու եղանակ,

ճանապարհ, օբյեկտիվ իրականության և հետազոտության առարկայի, երևույթի,

գործընթացի զարգացման օրինաչափությունների իմացության հիման վրա կատարվող տեսական հետազոտության կամ ինչ-որ բանի իրականացման եղանակ: Ուսուցման մեթոդ կոչվում է ուսուցչի և սովորողի փոխկապակցված, կարգավորված գործընթացը, որն ուղղված է ուսուցման գործընթացում կրթության, դաստիարակության և զարգացման խնդիրների լուծմանը: Ավանդական մեթոդներ.

1. բացատրացուցադրական մեթոդ,
2. վերարտադրողական (ռեպրոդուկտիվ) մեթոդներ,
3. մասնակի վերարտադրողական (էվրիստիկ գրույցի) մեթոդ,
4. պրոբլեմային ուսուցան մեթոդ,
5. հետազոտական մեթոդ,  
Ժամանակակից մեթոդներ.
6. ինտերակտիվ մեթոդներ,
7. համագործակցային ուսուցման մեթոդներ:

Ինտերակտիվ ուսուցման հիմնական բնութագրիչներից մեկը ուսուցման համապատասխան միջավայրն է, որտեղ երեխան զգում է իր մասնակցության և անձի կարևորությունը, ինչն էլ և ուսուցման գործընթացը դարձնում է խիստ արդյունավետ: Ինտերակտիվ ուսուցման էությունն այն է, որ բոլոր սովորողները ընդգրկվում են ուսումնառության մեջ: Ընդ որում՝ յուրաքանչյուրն իր անհատական ներդրումն է ունենում իր հնարավորությունների չափով: Տեղի է ունենում գիտելիքների ու մտքերի փոխանակում իրար մեջ, ի դեպ՝ դա ընթանում է բացարձակապես բարյացակամության և փոխօգնության մեջ, որը նպաստում է ոչ միայն նոր գիտելիքներ ստանալուն, այլև զարգացնում է իմացական գործընթացը՝ այն բերելով ավելի բարձր մակարդակի՝ համագործակցային ձևի:

Ինտերակտիվ ուսուցման սկզբունքներն են՝

1. Փոխներգործություն, փոխուսուցում:
2. Սովորողի ակտիվություն:
3. Համագործակցություն:
4. Ինքնաարտահայտման խրախուսում:
5. Հետադարձ կապի ապահովում:

Համագործակցային ուսուցումը ուսուցման եղանակ է: Համագործակցային ուսուցումը սովորելն է՝ խոսելու միջոցով, երբ մեկը մյուսին օգնում է ըմբռնելու նյութը: Համագործակցային ուսուցումը մեծացնում է նաև սովորողների

ինքնուրույնությունը և պատասխանատվությունը: Համագործակցային ուսուցման նպատակն է՝ յուրաքանչյուր անհատի դարձնել ուժեղ անձնավորություն ժամամանակակից հասարակության մեջ, ինչպես նաև՝ խմբի ակտիվ և համագործակցելուն պատրաստ անդամ:

Համաձայն հետազոտությունների՝ համագործակցային ուսուցումը ուժեղացնում է՝

- համագործակցային հմտությունները (թիմային աշխատանք, սոցիալական հմտություններ),

- տեղեկատվության մշակման հմտությունները (մտածողության հմտություններ),

- բազմազանության (բազմակարծության) ըմբռնումն ու ընդունումը,

- անհատականությունը՝ ինքնավստահությունը և ակտիվ քաղաքացիությունը,

- ստեղծագործական կարողությունները և գործնականությունը:

Վերը նշված հմտությունները և ակադեմիական բովանդակությունը (առարկան և թեմաները) սովորելու միջոցներ են:

## **Առանցքային կարողունակությունների ձևավորմանը նպաստող դասի պլանավորում**

«Դաս» հասկացությունն ունի հետևյալ բնութագրիչները՝ նպատակ, բովանդակություն, ուսուցման միջոցներ և մեթոդներ, սովորողների ուսումնական գործունեության կազմակերպում: Դասի նշված հիմնական բնութագրիչների մեջ հիմնական դերը պատկանում է հանրակրթական, դաստիարակչական և գործնական նպատակներին:

Դասի թեմա՝ Չուգահեռագիծ

Դասի հիմնական նպատակը՝ նպաստել սովորել սովորելու կարողունակության ձևավորմանը:


Յուրաքանչյուր հաղորդակցության մեջ կարևոր է սկիզբը: Դասի հաջող սկիզբը շատ կարևոր է: Եթե ուսուցչին հաջողվի դասի առաջին րոպեներին գրավել աշակերտների ուշադրությունը, ապա դա էապես կնպաստի դասի արդյունավետ ընթացքին:

Կազմակերպչական աշխատանքներից և նախորդ դասի տնային


հանձնարարությունների դիտարկումից հետո ուսուցիչը ներկայացնում է դասի









թեման և հիմնական նպատակը: Սահմանելով նոր երկրաչափական պատկեր, ինքնուրույն գտնել այն հատկությունները, որով օժտված է այդ պատկերը: Նոր նյութի փոխանցումը սկսվում է գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի հնարով: Ուսուցիչը գծում է M-աձև աղյուսակ, որի ձախ սյունակում գրում է՝ գիտեմ, կենտրոնում՝ ուզում եմ իմանալ, աջ սյունակում՝ սովորեցի բառերը:



Օգտագործելով ավանդական հարց ու պատասխանով նյութը վերհիշելու մոտեցումները աշակերտները լրացնում են աղյուսակների ձախ սյունը:  
 Առաջադրված հարցերն են՝  
 - ինչ՞ գիտեք երկու զուգահեռ ուղիղները հատողով հատելիս առաջացած անկյունների մասին



- ինչ՞ գիտեք եռանկյունիների հավասարության հայտանիշների մասին:



Որից հետո ուսուցիչը սահմանում է զուգահեռագիծ պատկերը: Նոր պատկերը սահմանելուց հետո ուսուցիչը դասարանը բաժանում է երեք խմբի և ըստ խմբերի հերթականության հանձնարարում է օգտագործելով վերիիշած կյուրթերը հետազոտել և գտնել զուգահեռագծի հատկությունները:

Առաջին խումբ՝ գտնել հատկություն զուգահեռագծի կողմերի մասին, երկրորդ խումբ՝ գտնել հատկություն զուգահեռագծի անկյունների մասին, երրորդ խումբ՝ գտնել հատկություն զուգահեռագծի անկյունագծերի մասին:

Շատ զգույշ պետք է վարվել խմբային աշխատանքներ կազմակերպելիս: Շատ տարածված իրողություն է,

- որ խմբում մեկն իր վրա է վերցնում ողջ աշխատանքը՝ կարդում է նյութը, պարտադրում է իր կարծիքը, գրում է, նկարում է, և մյուսները մնում են ստվերում,
- աշխատանքը ժամանակի առումով չի վերահսկվում և կարող է ժամանակին չավարտվել,
- խմբի ներսում հստակ չեն բաժանվում պարտականությունները,
- սենյակում լսվող ոչ գրադարանային ձայնը խանգարում է աշխատել:

Խմբերի բաժանումը պետք է կատարել ոչ թե պատահականության սկզբունքով, այլ համաչափորեն: Դրա համար թերևս ուսուցիչն արդեն պետք է գտնե մոտավոր պատկերացնի, թե խմբում ով կարող է լինել լոկոմոտիվ, խմբի անդամներից ով կարող է առաջադրանքի ծանրությունն իր վրա վերցնել, աջակցել և մասնակից դարձնել մյուսներին:

Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է: Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել: Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը:

Խմբային աշխատանքի խոցելի կողմերից մեկն այն է, որ առանձին աշակերտներ «թաքնվում են» խմբի հետևում: Նման իրավիճակում ուսուցիչները կարող են կիրառել «ես-դու-մենք» հնարը: Յուրաքանչյուր աշակերտի առաջարկեք խմբային աշխատանքի վերջում ներկայացնել սեփական ներդրումը խմբի աշխատանքում, խմբի մյուս անդամների ներդրումը և ընդհանուր խմբի աշխատանքի որակը: Դասի հետագա ընթացքը ապահովելու համար ուսուցիչը կիրառում է խմբային հետազոտության մեթոդ: Խմբային հետազոտությունը հիմնվում է աշակերտների փոխօգնության և համագործակցության վրա: Խմբային հետազոտության հիմնական նպատակը կոնկրետ խնդրի ուսումնասիրությունն է: Խմբային հետազոտություն կիրառող ուսուցիչը կարող է հետապնդել 3 փոխկապակցված նպատակ.

-խմբային հետազոտությամբ աշակերտներին սովորեցնել համակարգված և վերլուծականորեն հետազոտել կոնկրետ խնդիրները,

-պայմաններ ստեղծել, որպեսզի աշակերտները խորությամբ յուրացնեն ուսումնական նյութի բովանդակությունը,

-սովորեցնել համագործակցել խնդրի լուծման հետազոտման ընթացքում:

Այսպիսով՝ այս նպատակների իրականացման արդյունքում խմբային հետազոտություն կատարող աշակերտները խորությամբ յուրացնում են ուսումնական նյութի բովանդակությունը, զարգանում են իրենց հետազոտելու և համագործակցելու հմտությունները:

Չհետազոտության իրականացումը խմբային հետազոտության ամենակարևոր փուլն է: Այս փուլում են աշակերտները փնտրում ռեսուրսներ, հավաքում տեղեկատվություն: Այս ընթացքում ուսուցիչը, պարբերաբար շրջելով (սահելով) խմբերում, պետք է պարզի, թե ինչ են անում աշակերտները, ինչ աջակցության կարիք ունեն:

Արդյունքների ամփոփմամբ և ներկայացման փուլում աշակերտները վերլուծում և գնահատում են իրենց ձեռքի տակ եղած տեղեկատվությունը, իսկ ուսուցիչը շրջում է խմբերում և աջակցում նրանց: Առաջին հերթին անհրաժեշտ է սովորողների ուշադրությունը կենտրոնացնել հետազոտվող թեմայի վրա, թույլ չտալ շեղվել թեմայից: Ոչ պակաս արդյունավետ է նաև աջակցության ամենահումանիստական ձևը՝ աջակցել խրախուսելով:

Չհետազոտության արդյունքների ներկայացման փուլն ունի երկու հիմնական նպատակ՝

- լուսաբանել կատարված հետազոտությունը,

-և կարողանալ հետաքրքիր ու հասկանալի ձևով ներկայացնել այն:

Չհետազոտության արդյունքները կարելի է ներկայացնել բանավոր, գրավոր, բանավոր-գրավոր, պատկերային ձևով աշակերտները ներկայացնում են իրենց կատարած հետազոտության արդյունքները դասարանին: Ուսուցիչը

անհրաժեշտության դեպքում ուղղություն է ցույց տալիս աշակերտին՝

համապատասխան եզրակացության գալու համար և վերջում անփոփոխ է

զուգահեռագծի հատկությունները, որից հետո աշակերտները լրացնում են աղյուսակի սովորեցի սյունակը: Խմբային հետազոտության գնահատումը պետք է իրականացվի այս մեթոդի երեք նպատակների հասանելիության ստուգման առումով՝

-հետազոտական հմտությունների,

-խմբային (համագործակցային) հմտությունների,

-բովանդակության յուրացման:

Համագործակցային եղանակով աշխատող ուսուցչի համար նույնպես շատ կարևոր

է պարզել, թե որքանով են աշակերտները յուրացրել իրենց հետազոտած նյութը:

Ուսուցիչը դա կարող է գնահատել՝ հիմնվելով աշակերտների ներկայացման վրա:

Գնահատումը կարելի է կատարել ոչ միավորային ձևավորող գնահատմամբ:

## Եզրակացություն

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է, որ շներիիվ կարելի է պալանավորել կարողունակությունների ձևավորմանը նպաստող դասեր: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է: Համագործակցային ուսուցումն ապահովում է մեծ առաջընթաց ուսուցման և ուսումնառության գործընթացում:

Մանկավարժական նշանակությունից բացի, այն ունի նաև հասարակական գործառույթ: Համագործակցային բազմազան հմտություններ են անհրաժեշտ խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար: Ուստի, այդ հմտությունների ձևավորումն ու զարգացումը պետք է իրականացնել ուսուցման և ուսումնառության գործընթացում՝ ապահովելով դրանց արդյունավետության գիտակցումն և ձեռքբերումները:

# Գրականություն

1. Այվազյան Էդվարդ, մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2016
2. <https://multiurok.ru/blog/hamagortsakts-ayin-owsowts-man-met-odnere.html>
3. <http://gspi.am/media/journal/2014n1b/37.pdf>
4. <https://forum.armedu.am/forum/%D5%AF%D6%80%D5%A9%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B-D5%B8%D5%AC%D5%B8%D6%80%D5%BF/%D5%B4%D5%A1%D5%BD%D5%B6%D5%A1%D5%A3%D5%A5%D5%BF%D5%AB-%D5%A1%D5%B6%D5%AF%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6/1529-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A1%D5%AF%D6%81%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B8%D6%82%D5%B4-%D5%AD%D5%B4%D5%A2%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B6%D6%84>